

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ

ԵՎ

ՔԵՄՈՆԻՔՍ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ՎՃԻՌՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ 2002

ASSOCIATION OF JUDGES OF THE REPUBLIC OF ARMENIA

SPONSORED BY
THE COUNCIL OF EUROPE
AND
CHEMONICS INTERNATIONAL INC.

COLLECTION OF JUDGMENTS
OF EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Մասնագիտական խմբագիր

YEREVAN 2002

Ալվինա Գյուլումյան
ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
ՀՀ դատավորների միության նախագահ

Պատասխանատու խմբագիր

Լիանա Հակոբյան
ՀՀ սահմանադրական դատարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ

Լեզվական խմբագիր

Աիդա Կարապետյան

Ժողովածուի մեջ ընդգրկված վճիռները անգլերենից թարգմանել են.

Լուսինե Պողոսյանը
Մարինա Մխիթարյանը
Սուսաննա Բաղդասարյանը
Կարինե Բալայանը

ԳԻՆՈՒՆԵՐՆ ԸՆԴԴԵՄ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ
ԵՎ ՀԱՅԿՍՏԱՆԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ
ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

CASE OF THE GILLOW v. THE UNITED KINGDOM OF
GREAT BRITAIN AND NORTHERN IRELAND

(Գանգատ թիվ 13/1984/85/132)

Դատարանի 1986թ. հոկտեմբերի 23-ի վճիռը

Ստրասբուրգ

Գիլլունների գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 43-րդ հոդվածի և Դատարանի կանոնակարգի համապատասխան դրույթների համաձայն՝ որպես Պալատ, հետևյալ դատավորների կազմով՝ պրն Գ. Վիարդա, Նախագահ, պրն Ռ. Ռիսդալ, պրն Թոր Վիլյամսոն, պրն Գ. Լագերգեն, պրն Լ. Ե. Պետիտի, սրբ Վինսենթ Էվանս, պրն Ռ. Մակդոնալդ, նաև պրն Մ.-Ա. Էյսեն, Քարտուղար, և պրն Հ. Պետցոլդ, Քարտուղարի տեղակալ,

1986թ. փետրվարի 19-ին և 20-ին, հոկտեմբերի 22-ին և 23-ին, անցկացնելով դռնփակ խորհրդակցություն՝

1986թ. հոկտեմբերի 23-ին ընդունել է հետևյալ վճիռը:

ՎԱՐՈՒՅԹԸ

1. Գործը Դատարան է հանձնվել Մարդու իրավունքի եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով») կողմից 1984թ. դեկտեմբերի 19-ին՝ Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին կետով և 47-րդ հոդվածով նախատեսված եռամսյա ժամկետում: Գործի համար առիթ է հանդիսացել 1980թ. հունվարին Մեծ Բրիտանիայի քաղաքացիներ պրն Ջոզեֆ և տկն Իվոն Գիլլունների կողմից ընդդեմ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Հանձնաժողովին ուղղված գանգատը (թիվ 9063/80):

2. Հանձնաժողովի առաջարկը հիմնվում էր 44-րդ և 48-րդ հոդվածների և այն հայտարարության վրա, որով Մեծ Բրիտանիան ճանաչում էր Դատարանի պարտադիր իրավագործությունը (46-րդ հոդված): Առաջարկվում էր, որ Դատարանը որոշեր՝ արդյո՞ք տեղի են ունեցել Կոնվենցիայի 6-րդ, 8-րդ և 14-րդ հոդվածների և 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտումներ:

3. Ի պատասխան Դատարանի կանոնակարգի 33-րդ կանոնի 3(d) կետի

համաձայն կատարված հարցման՝ դիմողները հայտարարել են, որ իրենք ցանկանում

են մասնակցել դատավարությանը և ակնկալել են ստանալ իրենց գործն անձամբ

ներկայացնելու թույլտվություն: 1985թ. մարտի 4-ին Դատարանի նախագահը տվել է

այդ թույլտվությունը՝ այն պայմանով, որ դիմողներին կաջակցի որևէ փաստաբան կամ անհրաժեշտ իրավաբանական գիտելիքներ ունեցող մեկ այլ անձ (30-րդ կանոն, կետ 1, երկրորդ նախադասություն): Ապրիլի 30-ին դիմողները նշանակել են այդպիսի մի անձ, սակայն հետագայում նրանք չեն համաձայնել այդ անձի՝ գործը ներկայացնելու եղանակին: Ելնելով նշված հանգամանքներից՝ 40-րդ կանոնի 1-ին կետի համաձայն Դատարանը որոշել է լսել դիմողների վկայությունը լսումների ժամանակ:

4. Յոթ դատավորներից բաղկացած Պալատը կազմավորվել է՝ ներառելով, որպես *ex officio* անդամներ, սըր Վինսենթ Էվանսին՝ Մեծ Բրիտանիայից ընտրված դատավոր (Կոնվենցիայի 43-րդ հոդված), և պրն Գ. Վիարդային՝ Դատարանի նախագահ (21-րդ կանոն, կետ 3(b)): 1985թ. հունվարի 23-ին Նախագահը, Քարտուղարի ներկայությամբ, վիճակահանությամբ որոշել է մյուս հինգ անդամներին, մասնավորապես՝ պրն Ռ. Ռիսդալին, պրն Թոր Վիլյամսոնին, պրն Է. Գարսիա դը Էնտերիային, պրն Մ. Լիշին և պրն Գ. Լագերգրենին (Կոնվենցիայի 43-րդ հոդված և 21-րդ կանոնի 4-րդ կետ): Հետագայում պրն Գարսիա դը Էնտերիային և պրն Լիշին, որոնք հնարավորություն չունեին մասնակցելու գործի քննությանը, փոխարինել են փոխարինող դատավորներ պրն Լ.-Է. Պետիտին և պրն Ռ. Մակդոնալդը:

5. Պրն Վիարդան, որը ստանձնել էր Պալատի նախագահի պաշտոնը (21-րդ կանոն 5-րդ կետ), Քարտուղարի միջոցով խորհրդակցել է Միացյալ Թագավորության կառավարության («Կառավարություն») ներկայացուցչի, Հանձնաժողովի պատվիրակի և դիմողներին իրավաբանական օգնություն տրամադրելու համար նշանակված փաստաբանի հետ՝ գրավոր վարույթի անհրաժեշտության վերաբերյալ (37-րդ կանոն, 1-ին կետ): Մայիսի 7-ին Նախագահը կարգադրել է, որպեսզի Կառավարության ներկայացուցիչը և դիմողները մինչև օգոստոսի 9-ը ներկայացնեն իրենց գրավոր բացատրությունները, և որպեսզի պատվիրակին իրավունք տրվի երկու ամսվա ընթացքում ներկայացնելու պատասխան դիտողություններ՝ սկսած այն օրվանից, երբ Քարտուղարը նրան կփոխանցի նշված փաստաթղթերից վերջին ներկայացվածը: Հետագայում Նախագահը համաձայնել է նախկին ժամկետը երկարացնել մինչև 1985թ. սեպտեմբերի 13-ը: Դիմողների և Կառավարության գրավոր բացատրությունները ներկայացվել են Քարտուղարություն համապատասխանաբար՝ 1985թ. օգոստոսի 7-ին և սեպտեմբերի 17-ին: 1985թ. դեկտեմբերի 5-ին Հանձնաժողովի քարտուղարությունը ծանուցել է Դատարանի քարտուղարությանը, որ իրենց պատվիրակն իր բացատրությունները կներկայացնի լսումների ժամանակ:

1985թ. ապրիլի 26-ին Հանձնաժողովը ներկայացրել է որոշ փաստաթղթեր, որոնք Քարտուղարը պահանջել էր Նախագահի հրահանգով:

6. Քարտուղարի միջոցով Կառավարության ներկայացուցչի և Հանձնաժողովի պատվիրակի հետ խորհրդակցելուց հետո ղեկտեմբերի 11-ին Նախագահը կարգադրել է, որպեսզի բանավոր լսումներն սկսվեն 1986թ. փետրվարի 18-ին:

7. Դռնբաց լսումներն անցկացվել են Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, նշանակված օրը: Լսումներն սկսելուց անմիջապես առաջ Դատարանն անցկացրել է նախապատրաստական հանդիպում:

Դատարանի առջև հանդես են եկել՝

- Կառավարության անունից՝

տկն Կ. Փոլյսը, Ներքին գործերի

նախարարություն

գործող ներկայացուցիչ,

պրն Վ. Գ. դը Քերին, Գրնսիի գլխավոր դատախազ,

պրն Ն. Բրատցան, բարիստեր

փաստաբան,

օրիորդ Է. Լինկոլնը, Գրնսիի Բնակարանային

հարցերով պետական

մարմինների նախագահ

պրն Լ. Բարբեն, Գրնսիի Բնակարանային

հարցերով պետական

մարմինների կառավարիչ

խորհրդականներ,

- Հանձնաժողովի անունից՝

պրն Գաուբուր Յորունդսոնը

պատվիրակ:

Դատարանը լսել է Կառավարությունը ներկայացնող պրն Քերիի և պրն Բրատցայի ելույթները, ինչպես նաև Հանձնաժողովը ներկայացնող պրն Գաուբուր Յորունդսոնի ելույթը: Լսումների ընթացքում Կառավարությունը և Հանձնաժողովի պատվիրակն իրենց զրավոր պատասխաններն են ներկայացրել Դատարանի հարցերին: Դատարանը լսել է նաև պրն և տկն Գիլոուներին (տե՛ս վերը նշված 3-րդ կետը), որոնց թույլ էր տրվել մեկ ամսվա ընթացքում ներկայացնել լսումների ժամանակ Կառավարության ներկայացրած վիճակագրական տվյալների վերաբերյալ իրենց դիտողությունները: Քարտուղարությունը նրանց դիտողություններն ստացել է 1986թ. մարտի 10-ին և ապրիլի 3-ին:

8. 1986թ. հոկտեմբերի 10-ին Կառավարության ներկայացուցիչը որոշ տեղեկություն է տրամադրել սույն գործով 1-ին Արձանագրության կիրառման

վերաբերյալ: Ի պատասխան՝ Հանձնաժողովի պատվիրակն իր դիտողությունները ներկայացրել է հոկտեմբերի 17-ին (տե՛ս ստորև բերված 60-րդ կետը):

ՓԱՍՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

A. Գործի հանգամանքները

9. Պրն Ջոզեֆ և տկն Իվոն Գիլոուները ծնվել են Անգլիայում համապատասխանաբար՝ 1916թ. և 1918թ.: Նրանք Բրիտանիայի քաղաքացիներ են և երկուսն էլ՝ թոշակառու:

10. 1956թ. ապրիլին պրն Գիլոուն նշանակվել է Գրնսիի այգեգործության հարցերով նորաստեղծ խորհրդատվական պետական ծառայության տնօրեն: Դրա արդյունքում, վաճառելով իրենց տունը Լանկաշիրում, դիմողները ընտանիքով և իրենց կահույքով տեղափոխվել են Գրնսի: Սկզբնական շրջանում նրանք զբաղեցրել են Գրնսիի նահանգի պետական սեփականություն հանդիսացող մի տուն: Սակայն 1957թ. պրն Գիլոուն Գրնսիում հողամաս է գնել, որտեղ, հատակագծման անհրաժեշտ թույլտվություն ստանալուց հետո, կառուցել է «Whiteknights» կոչվող տունը: Նա և իր ընտանիքը զբաղեցրել են այդ տունը 1985թ. սեպտեմբերի 1-ից:

Սեփականության՝ հարկման ենթակա արժեքն էր 51 ֆունտ ստերլինգ, որից 49 ֆունտ ստերլինգ վերագրվում էր միայն տանը: Ինչպես այն ժամանակ, այնպես էլ այժմ այն «վերահսկվող տուն» է (տե՛ս ստորև՝ 30-րդ կետ): Այնուամենայնիվ, դիմողները տունը զբաղեցնելու թույլտվության կարիք չունեին, քանի որ նրանք ունեին «բնակության ցենզ»՝ Բնակարանային վերահսկման մասին 1957թ. օրենքի (ընդլայնում և փոփոխություն) (Գրնսի) («1957թ. Բնակարանային օրենք») համաձայն (տե՛ս ստորև՝ 30-րդ կետ):

11. 1960թ. օգոստոսին, երբ պրն Գիլլուն Գրնսիի այգեգործության հարցերով խորհրդատվական ծառայությունում ազատվել է իր պաշտոնից, դիմողները և նրանց ընտանիքը հեռացել են Գրնսիից, և պրն Գիլլուն աշխատանքի է ընդունվել Սննդի և գյուղատնտեսության կազմակերպությունում (FAO): Այն ժամանակվանից մինչև 1978թ. թոշակի անցնելը նա ժամանակավոր պայմանագրերով աշխատել է արտասահմանում՝ զանազան զարգացման գործակալություններում:

12. 1960թ. օգոստոսից մինչև 1978թ. հուլիսը «Whiteknights»-ը վարձակալության է տրվել այնպիսի անձանց, որոնք ունեին կա՛ն անհրաժեշտ «բնակության ցենզ», կա՛ն Գրնսիի Բնակարանային հարցերով պետական մարմինների («Բնակարանային հարցերով մարմիններ») կողմից տրված թույլտվություն՝ 1957թ. Բնակարանային օրենսգրքի և հետագա փոփոխությունների համաձայն (տե՛ս ստորև՝ 30-33-րդ կետեր): Այս ժամանակահատվածում դիմողները տարբեր բնակավայրերից պարբերաբար նամակագրական կապի մեջ են եղել Բնակարանային հարցերով մարմինների հետ, inter alia, իրենց սեփականության վաճառքի դեպքում Բնակարանային օրենսդրության կիրառման մասին տեղեկություն ստանալու համար:

1963թ. նոյեմբերին պրն Գիլլուն տան սեփականության իրավունքը փոխանցել է իր կնոջը:

13. 1978թ. հուլիսի 26-ի նամակով Բնակարանային հարցերով մարմինները տկն Գիլլունին տեղեկացրել են վարձակալի՝ «Whiteknights» տնից դուրս գալու մտադրության մասին և հարցրել, թե ո՞վ է լինելու հաջորդ վարձակալը: Օգոստոսի 31-ի նամակով տկն Գիլլուն տեղեկացրել է Բնակարանային հարցերով մարմիններին՝ իր և իր ամուսնու՝ Գրնսի վերադառնալու մտադրության մասին: Սեպտեմբերի 15-ին նշված մարմինները պատասխանել են, որ դիմողներն իրավունք չունեն զբաղեցնելու իրենց տունը՝ առանց 1975թ. Բնակարանային (Բնակությունը վերահսկող) (Գրնսի)

օրենքի («1975թ. Բնակարանային օրենք») 3-րդ բաժնով նախատեսված թույլտվության (տե՛ս ստորև՝ 33-րդ կետ):

1978թ. հուլիսի 31-ից «Whiteknights»-ը, վերջին վարձակալի մեկնելուց հետո, ազատ է եղել: Դրանից բխում է, որ ո՛չ Բնակարանային հարցերով մարմինները և ո՛չ էլ դիմողները նշված օրվանից հետո տուներ վարձակալության տալու առաջարկ չեն ստացել:

14. 1978թ. նոյեմբերին դիմողները Յոնկոնգից վերադարձել են Անգլիա, որտեղ էլ ժամանակավորապես բնակվել են տկն Գիլոուի մոտ հետ:

1979թ. ապրիլի 21-ին տկն Գիլոուն դիմել է Բնակարանային հարցերով մարմիններին՝ հայտնելով իր և իր ամուսնու՝ թոշակի անցնելուց հետո «Whiteknights» վերադառնալու մտադրության մասին: Նա ավելացրել է, որ տվյալ պահին նա Գրնսիում ուսուցչի աշխատանք է փնտրում: Բացի դրանից, հարկավոր էր տանը կատարել զանազան նորոգման աշխատանքներ, որոնցից մի մասը դիմողներն առաջարկել էին վերցնել իրենց վրա: Համապատասխանաբար, այդ տանը բնակվելու երկարաժամկետ թույլտվություն հայցելու հետ մեկտեղ, տկն Գիլոուն հայցել է նաև ժամանակավոր թույլտվություն մինչև 1979թ. սեպտեմբերը՝ նորոգման աշխատանքները կատարելու նպատակով:

15. 1979թ. ապրիլի 29-ին պրն և տկն Գիլոունները վերադարձել են Գրնսի և կրկին զբաղեցրել «Whiteknights»-ը: Մայիսի 7-ին, որևէ պատասխան չստանալով Բնակարանային հարցերով մարմիններից, տկն Գիլոուն կրկին դիմել է նրանց՝ կրկնելով իր խնդրանքը և հաղորդելով Գրնսի իրենց վերադառնալու մասին:

Բնակարանային հարցերով մարմինները պատասխանել են մայիսի 14-ին՝ տկն Գիլոուին տեղեկացնելով այն մասին, որ մայիսի 3-ին անցկացված ժողովի

քննարկումներից հետո մերժվել է «Whiteknights»-ը բնակեցնելու երկարատև թույլտվությունը՝ ելնելով «ներկա անբարենպաստ բնակարանային իրավիճակից»: Պատասխանում նշվել է նաև, որ նախ՝ դիմողներին երբևիցե չէր տրվել այդ տանը բնակվելու թույլտվություն, և երկրորդը՝ նույնիսկ եթե տկն Գիլոուն ընդունվեր համայնքի համար էական համարվող աշխատանքի, միևնույն է, դիմողներին չէր թույլատրվի բնակվել իրենց տանը տկն Գիլուուի թոշակի անցնելուց հետո, քանի որ նրա տարիքը թույլ չէր տալիս թերևս տասը տարի անընդմեջ աշխատել նշված պաշտոնում, ինչպես պահանջում է 1975թ. Բնակարանային օրենքը:

Նամակում ժամանակավոր թույլտվության խնդրանքի վերաբերյալ ոչ մի խոսք չկար:

16. 1979թ. հուլիսի 5-ին Բնակարանային հարցերով մարմինների ներկայացուցիչն այցելել է դիմողներին և նրանց հանձնել ժամանակավոր թույլտվություն ստանալու համար դիմումի պաշտոնական ձևը: Չորս օր անց նրանք ներկայացրել են դիմումը, սակայն այն մերժվել է հուլիսի 19-ին՝ Բնակարանային հարցերով մարմինների որոշմամբ: Հուլիսի 27-ին մերժման մասին ծանուցումը հանձնվել է տկն Գիլուուին, որում նշված էին հետևյալ պատճառաբանությունները.

- որ տկն Գիլուուին չի ներկայացրել բավարար ապացույցներ՝ հիմնավորելու համար, որ ինքը կընդունվեր համայնքի համար էական համարվող աշխատանքի,

- որ «Whiteknights»-ը հավանաբար պահանջարկ կունենար բնակության ցենզ ունեցող անձանց կողմից, ինչը չունեին դիմողները,

- որ ներկա բնակարանային անբարենպաստ իրավիճակում Բնակարանային հարցերով մարմիններն սկզբունքորեն չէին կարող հիմնավորել դիմողներին թույլտվություն տալը:

Տկն Գիլուուին տեղեկացրել էին նաև, որ նա իրավունք ուներ նշված որոշման դեմ զանգատ ներկայացնելու Թագի դատարան՝ 1975թ. Բնակարանային օրենքի 19-րդ

բաժնի համաձայն (տե՛ս ստորև՝ 33-րդ կետ): Վերջապես, նրան տեղեկացրել էին, որ եթե նա և իր ամուսինը հակառակն ապացուցող հիմնավոր պատճառաբանություն չբերեն, Բնակարանային հարցերով մարմինները նրանց՝ «Whitknights» տան զբաղեցման հարցը կներկայացնեն Գրնսիի իրավապահ մարմիններին՝ հետապնդման նպատակով, եթե նրանք յոթնօրյա ժամկետում չազատեն տունը:

17. 1979թ. հուլիսի 29-ի իրենց պատասխանում դիմողները կրկնել են առնվազն մինչև օգոստոսի վերջը ժամանակավոր թույլտվություն ստանալու իրենց խնդրանքը՝ անհրաժեշտ նորոգման աշխատանքները ավարտելու և տունը վաճառքի հանելու նպատակով: Նրանք հայտարարել են, որ իրենք տունը չեն «զբաղեցրել»՝ 1975թ. Բնակարանային օրենքում արտահայտված իմաստով: Նրանք պնդել են, որ օրենքը չէր կարող ողջամտորեն արգելել նրանց՝ կատարել նախորդ տասնութ տարիների ընթացքում գույքը վարձակալության հանձնելու հետևանքով առաջացած նորոգման աշխատանքները, և որ օրենքը թույլ էր տալիս նրանց ձեռնարկել գույքը վաճառելու քայլեր, հետևաբար, նույն ժամանակահատվածում որևէ այլ անձ չէր կարող այն զբաղեցնել: Դիմողները նաև առարկել են, որ մինչև 1978թ. սեպտեմբերն իրենց չէին տեղեկացրել, որ «Whitknights»-ը բնակեցնելու համար թույլտվություն էր պահանջվում. մասնավորապես, նրանց չէր ծանուցվել 1978թ. փետրվարին Բնակարանային վերահսկման 1969թ. օրենքի (Գրնսի)՝ ուժի մեջ մտնելու մասին («1969թ. Բնակարանային օրենք»), որը պարունակում էր այնպիսի նոր դրույթներ, որոնց համաձայն իրենք զրկվում էին «բնակության ցենզից» (տե՛ս ստորև՝ 32-րդ կետը):

18. Նշված նամակը քննարկվել է Բնակարանային հարցերով մարմինների՝ 1979թ. օգոստոսի 9-ի ժողովում: Օգոստոսի 15-ին նրանք տկն Գիլրուին պատասխան են ուղարկել՝ հաստատելով, որ մինչև 1978թ. սեպտեմբերի 15-ը նա չէր տեղեկացվել ո՛չ օրենսդրության մեջ կատարված փոփոխության, ո՛չ էլ թույլտվություն ձեռք բերելու

անհրաժեշտության մասին: Բնակարանային հարցերով մարմինները նաև ընդունել են, որ եթե դիմողները «Whiteknights»-ն ազատեին մինչև 1979թ. սեպտեմբերի 1-ը, ապա ապօրինի զբաղեցման դեմ միջոցներ ձեռնարկելու խնդիր չէր առաջանա:

19. Քանի որ գույքը դեռ չէր վաճառվել, օգոստոսի 23-ին տկն Գիլոուն հայցել էր դիմողների այնտեղ մնալու թույլտվության լրացուցիչ երկարացում մինչև սեպտեմբերի վերջը: Այս խնդրանքը մերժվել է օգոստոսի 30-ին, որի մասին տկն Գիլոուն տեղեկացել էր սեպտեմբերի 3-ին: Բացի դրանից, հետապնդման սպառնալիքով, դիմողներին տուճն ազատելու համար տրվել էր յոթ օր ժամանակ:

1979թ. սեպտեմբերի 11-ին պրն և տկն Գիլոունները հանդիպել են Բնակարանային հարցերով մարմինների նախագահի հետ և, վաճառքը իրականացնելու նպատակով, *inter alia*, առաջիկա վեց ամիսների ընթացքում իրենց տանը մնալու թույլտվություն են խնդրել: Այս առիթով նրանք՝ իրենց բնակության իրավունքը կորցնելու դիմաց փոխհատուցման հարց են բարձրացրել:

Սեպտեմբերի 20-ին Բնակարանային հարցերով մարմինները դիմողներին նամակ են հղել՝ հաղորդելով, որ սեպտեմբերի 13-ին իրենց դիմումը վերանայվել է և մերժվել: Նրանց նաև տեղեկացրել են, որ ապօրինի զբաղեցման համար նրանց դեմ վարույթ է հարուցվում, եթե մինչև 1979թ. հոկտեմբերի 30-ը նրանք չազատեն «Whiteknights»-ը:

20. Հոկտեմբերի սկզբին պրն և տկն Գիլոունները խորհրդակցել են փաստաբանի հետ և հոկտեմբերի 13-ին նրան հանձնարարել են գանգատ ներկայացնել Թագի դատարան՝ Բնակարանային հարցերով մարմինների կայացրած բոլոր որոշումների դեմ: Նմանատիպ գանգատները կարող էին ներկայացվել միայն Թագի դատարանի փաստաբանի կողմից, սակայն դիմողների փաստաբանին չէր հաջողվել գանգատը ներկայացնել օրենքով սահմանված ժամկետում (1979թ. հոկտեմբերի 31):

Չամենայնդեպս, նոյեմբերի 5-ին փաստաբանը խնդրել է Բնակարանային հարցերով մարմիններին ոչ մի գործողություն չձեռնարկել դիմողների դեմ՝ մինչև ինքը դիմողների հետ լրացուցիչ խորհրդատվության հնարավորություն կունենա: Նոյեմբերի 9-ին նա դիմողների անունից «Whitknights»-ը մինչև 1980թ. ապրիլի 30-ը զբաղեցնելու թույլտվություն ստանալու նոր խնդրանք է ներկայացրել՝ վաճառքն իրականացնելու նպատակով: Նոյեմբերի 13-ի իրենց պատասխանում Բնակարանային հարցերով մարմինները նշել են.

«1979թ. նոյեմբերի 8-ին Բնակարանային հարցերով մարմինները հաշվի են առել Ձեր նամակի բովանդակությունը, սակայն ափսոսանքով որոշել են՝ քանի որ [դիմողները] տունն զբաղեցրել են առանց թույլտվության և նրանց բավարար ժամանակ էր տրամադրվել տարածքն ազատելու համար, հնարավոր չէ հիմնավորել տվյալ հարցով գործողությունների կասեցումը: Գործին առնչվող փաստաթղթերն արդեն հանձնվել են իրավապահ մարմիններին»:

Նոյեմբերի 16-ին Բնակարանային հարցերով մարմինները տեղեկացրել են փաստաբանին, որ նոյեմբերի 12-ին մերժվել է լրացուցիչ թույլտվության խնդրանքը:

21. Նոյեմբերի 20-ին փաստաբանը տեղեկացրել է Բնակարանային հարցերով մարմիններին, ոստիկանությանը և հետապնդում իրականացող մարմիններին, որ դիմողները մտադիր են բողոքարկելու: Ինչևէ, ոստիկանությունն այցելել է դիմողներին «Whitknights»-ում և նրանցից ցուցմունք է պահանջել, սակայն նրանք հրաժարվել են խոսել առանց իրենց փաստաբանի ներկայության: Դեկտեմբերի 19-ի՝ ոստիկանապետին ուղղված նամակով դիմողները հայտնել են, որ գանգատ են ներկայացնում: Այնուամենայնիվ, նրանք դատարան են կանչվել 1980թ. փետրվարի 1-ին:

22. 1980թ. հունվարի 22-ին դիմողները պարզել են, որ իրենց գանգատը դեռ չէր ներկայացվել Թագի դատարան, և իրենց փաստաբանի դեմ գանգատ են ներկայացրել

Գրնսիի Փաստաբանների կարգապահական պալատ: Վերջապես, 1980թ. փետրվարի 1-ին, առավոտյան ժամը 9-ի սահմաններում, նա տկն Գիլոուի անունից ներկայացրել է գանգատը՝ ընդդեմ Բնակարանային հարցերով մարմինների՝ 1979թ. մայիսի 3-ի, հուլիսի 19-ի և նոյեմբերի 12-ի թույլտվությունները մերժող որոշումների: Այս գանգատի նպատակն էր ստանալ կա՛մ անսահմանափակ ժամկետով թույլտվություն, կա՛մ, որպես այլընտրանք, մինչև 1980թ. ապրիլի 30-ը «Whiteknights»-ը զբաղեցնելու թույլտվություն, և վիճարկել, որ այդ որոշումները Բնակարանային հարցերով մարմինների կողմից իրենց լիազորությունները ոչ ողջամիտ կերպով իրականացնելու արդյունք են: Թագի դատարանը քննության է առել գանգատը, չնայած որ այն ներկայացվել էր ժամկետանց:

23. Նույն օրվա ընթացքում, ավելի ուշ, դիմողները ծանուցագրով ներկայացել են Մագիստրատի դատարան: Նրանք խնդրել են գործի քննությունը հետաձգել, քանի որ տկն Գիլոուի գանգատի էությունը կազմում էր «Whiteknights»-ի զբաղեցման ապօրինի կամ օրինական լինելու հարցը: Այնուամենայնիվ, հետաձգումը մերժվել է՝ իրավապահ մարմինների պահանջով:

Դիմողների գործերը քննվել են առանձին-առանձին. նախ լսվել են պրն Գիլոուի դեմ բերված մեղադրանքները: Նա մեղադրվել է «Whiteknights»-ն առանց թույլտվության զբաղեցնելու մեջ, ինչի համար նրան տուգանել են: Տկն Գիլոուի գործը երկու անգամ հետաձգվել է և հետո դադարեցվել sine die, քանի որ դատարանը հաշվի էր առել, inter alia, տկն Գիլոուի գանգատը՝ ուղղված Թագի դատարանին, ինչպես նաև այն փաստը, որ պրն Գիլոուն բողոքել էր իր դատապարտման դեմ:

24. Վերջապես դիմողները «Whiteknights»-ը վաճառել են 1980թ. ապրիլի 15-ին՝ 33,000 ֆունտ ստերլինգով, որը, ըստ իրենց, տան իրական արժեքից ցածր էր:

25. 1980թ. հուլիսի 8-ին Թագի դատարանը՝ կազմված նախագահից և տասնմեկ երդվյալ ատենակալներից, միաձայն մերժել է տկն Գիլոուի գանգատը՝ Բնակարանային հարցերով մարմինների՝ 1979թ. մայիսի 3-ի և հուլիսի 19-ի որոշումների դեմ (տե՛ս վերը՝ 15-րդ և 16-րդ կետեր), և մեծամասնությամբ՝ 8 ձայնով՝ ընդդեմ 3-ի, 1979թ. նոյեմբերի 12-ի որոշման դեմ (տե՛ս վերը՝ 20-րդ կետ): Նշված վճիռը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ՝ 1975թ. Բնակարանային օրենքի 19 (4) բաժնի համաձայն:

26. 1980թ. օգոստոսի 26-ին Թագի դատարանը լսել և մերժել է պրն Գիլոուի գանգատն ընդդեմ իր դատապարտման: Լսումներից առաջ, ինչպես նաև լսումների ընթացքում պրն Գիլոուն վիճարկել է առաջին ատյանի դատարանում դատավարության ընթացքի արձանագրությունների ճշգրտությունը և բնագիր ձայներիզը լսելու թույլտվություն է խնդրել: Այս պահանջը մերժվել է, սակայն ընդմիջման ընթացքում դատարանի քարտուղարը լսել է ձայներիզը և հայտարարել է, որ գրառումները ճշգրիտ են:

Պրն Գիլոուն նաև հայտարարել է, որ Թագի դատարանը կանխակալ մոտեցում է ունեցել իր գործի նկատմամբ, քանի որ, բացառությամբ երդվյալ ատենակալներից մեկի, դատարանի կազմը նույնն էր, ինչ իր կնոջ՝ Բնակարանային հարցերով մարմինների որոշումների դեմ գանգատի վերաբերյալ վճիռ կայացրած դատարանինը: Նա նաև պնդել է, որ Թագի դատարանի կազմը՝ որպես այդպիսին, հին է:

27. 1980թ. սեպտեմբերի 9-ին Թագի դատարանը հիմնավորված է հայտարարել այն գանգատը, որը 1980թ. հունվարի 26-ին դիմողները ներկայացրել էին Փաստաբանների կարգապահական պալատ ընդդեմ իրենց փաստաբանի՝ Բնակարանային հարցերով մարմինների որոշումների դեմ իրենց գանգատը Թագի դատարան ժամկետանց ներկայացնելու համար:

B. Հանապատասխան ներպետական օրենսդրությունը և պրակտիկան

1. Սահմանադրական հիմքերը

28. Գրնսիի Բեյլիվիքը Բրիտանիայի թագավորական իշխանության հպատակ է: Այն ունի իր օրենսդիր ժողովը, դատարանները և գործադիր ու ֆինանսական համակարգերը, որոնք անշատ են Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի համակարգերից:

Օրենսդիր ժողովը Պետական խորհուրդն է, որն ունի 60 անդամ և որը նախագահում է բեյլիֆը կամ բեյլիֆի տեղակալը, որոնց երկուսին էլ նշանակում է միապետը: Պետական խորհուրդը կղզում իրականացնում է օրենսդիր իշխանությունը՝ «օրենքներ» կամ, որոշ հանգամանքներում, հրամաններ ընդունելու միջոցով: Օրենքները, մինչև ուժի մեջ մտնելը, պետք է հաստատվեն Նորին Մեծության կողմից: Թեև Միացյալ Թագավորության խորհրդարանն իրավասու է օրենքներ ընդունելու Գրնսիի համար, սակայն այն դեպքում, երբ այդ օրենքները վերաբերում են կղզու տեղական հարցերին, նման օրենքների (օրինակ, Բնակարանային օրենսդրությունը) ընդունումը հակասում է սահմանադրական համաձայնությանը:

Գրնսիի Թագի դատարանն ունի անսահմանափակ իրավագործություն և գործում է որպես և՛ առաջին ատյանի, և՛ վերաքննիչ դատարան: Դատարանի կազմի մեջ մտնում են բեյլիֆը, բեյլիֆի տեղակալը կամ բեյլիֆի օգնականը՝ որպես նախագահ, և ընտրված տասներկու երդվյալ ատենակալներ: Մագիստրատի դատարանն ունի սահմանափակ իրավագործություն՝ քրեական գործերի և սահմանափակ քանակով քաղաքացիական գործերի նկատմամբ:

2. Բնակարանային օրենսդրություն

29. 1945թ.՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտով պայմանավորված կղզու ազատագրումից հետո բազմաթիվ ընտանիքների վերադարձը և նոր բնակիչների մեծ ներհոսքն ստեղծեցին բնակարանային լուրջ խնդիրներ, ինչի հետևանքով անշարժ գույքի գների զգալի աճ էր գրանցվել: Ստեղծված իրավիճակից դուրս գալու նպատակով Պետական խորհուրդն ընդունել է Բնակությունը վերահսկող (արտակարգ դրույթներ) (Գրնսի) 1948թ. օրենքը, որն ուժի մեջ է մտել 1948թ. հունիսի 17-ին: Օրենքը սահմանափակում էր առանց թույլտվության Գրնսիում բնակվելու իրավունքը այն անձանցով՝ ովքեր ունեին «բնակության ցենզ», այսինքն՝ ովքեր կանոնավոր բնակվել են Գրնսիում 1938թ. հունվարի 1-ից 1940թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում: Նշված օրենքով սահմանված բնակարանային վերահսկողության համակարգը ժամանակ առ ժամանակ փոփոխվել է՝ ըստ կղզում փոփոխվող պայմաններից բխող պահանջների:

30. 1957թ. հոկտեմբերի 12-ին նշված օրենքը փոխարինվել է 1957թ. Բնակարանային օրենքով, ըստ որի բնակության ցենզի համար անհրաժեշտ վերը նշված վերջնական ժամկետը՝ 1940թ. հունիսի 30-ը, փոխարինվել է 1957թ. հունիսի 30-ով: Այսպիսով, այդ օրը կամ մինչ այդ օրը Գրնսիում կանոնավոր բնակվող անձինք, ինչպես, օրինակ, դիմողները, ունեին «բնակության ցենզ» և կարող էին այնտեղ բնակվել առանց թույլտվության:

Նոր օրենքը նաև վերահսկողությունից ազատել է տարեկան 50 ֆունտ ստերլինգից ավելի «հարկման ենթակա արժեք» (ներքին հարկման նպատակների համար) ունեցող բոլոր տները: Յուրաքանչյուր անձ կարող էր առանց սահմանափակումների

զբաղեցնել «բաց շուկայի տներ» համարվող գույքը: Մյուս կողմից, ավելի ցածր հարկման ենթակա արժեք ունեցող տները մտան «վերահսկվող բնակարաններ» դասի մեջ. այդպիսի տները կարող էին զբաղեցնել միայն այն անձինք, որոնք ունեին «բնակության ցենզ» կամ որոշակի տուն զբաղեցնելու համար Բնակարանային հարցերով մարմիններից ստացած թույլտվություն:

31. 1957թ. Բնակարանային օրենքի որոշ մանրամասներ փոփոխվել են 1962 և 1965 թվականներին (կահավորված բնակարանների առնչությամբ) և 1966թ., երբ Բնակարանային վերահսկողության (փոփոխություններ) (Գրնսի) 1966թ. օրենքով «բաց շուկայի տների» հարկման ենթակա արժեքի նվազագույն չափը բարձրացվեց մինչև 100 ֆունտ ստերլինգի: Հետագայում, Բնակարանային վերահսկողության հրամանագրով (հարկման ենթակա արժեք) այդ թիվը նվազեցվեց մինչև 85 ֆունտ ստերլինգի:

Բնակարանային վերահսկողության (Գրնսի) 1967թ. օրենքը և Բնակարանային վերահսկողության 1967թ. հրամանագիրը միավորել են այս ոլորտում ընդունված բոլոր նախորդ օրենսդրական ակտերը:

32. 1960-ականների վերջին բնակչության մի զգալի մասը, որը մեկնել էր Գրնսիից, Բնակարանային վերահսկողության 1957թ. օրենքի համաձայն ունենալով «բնակության ցենզ», փորձել է վերադառնալ կղզի: 1970թ. փետրվարի 2-ին ուժի մեջ է մտել 1969թ. Բնակարանային օրենքը, որը «բնակության ցենզին» հավելել է լրացուցիչ պայմաններ. բնակության ցենզ ունենալու համար բավական չէր միայն, որ անձը Գրնսիի մշտական բնակիչ լիներ 1938թ. հունվարի 1-ից 1957թ. հունիսի 30-ը նկատ ժամանակահատվածում, այլ նաև պետք է 1968թ. հուլիսի 31-ի դրությամբ տուն զբաղեցներ կամ լիներ այդպիսի մի բնակչի ամուսին կամ զավակ: Այնուամենայնիվ, Օրենքը նախատեսում էր մի բացառություն՝ հոգուտ ցանկացած անձի, ով 1969թ. հունվարի 29-ին օրինական կարգով զբաղեցնում էր վերահսկվող տուն, բայց այդ

դրույթը վերաբերում էր միայն վերահսկվող տներին: Յետևաբար, դիմողները զրկվել են «Whitknights»-ն առանց թույլտվության զբաղեցնելու իրավունք տվող «բնակության ցենզից», քանի որ նրանք նշված օրվա դրությամբ Գրնսիի մշտական բնակիչներ չէին:

Ինչ վերաբերում է «բնակության ցենզից» զուրկ անձանց վերահսկվող տներն զբաղեցնելու թույլտվություն տրամադրելուն, 1969թ. Բնակարանային օրենքը Բնակարանային հարցերով մարմիններին տվել է գործողությունների ազատության իրավունք, որը սահմանափակվում էր մի շարք գործոններով, որոնք պետք է հաշվի առնվեին կոնկրետ դեպքերում որոշում կայացնելիս: Բացի դրանից, օրենքն իրավունք է տալիս Բնակարանային հարցերով մարմինների որոշումների դեմ գանգատ ներկայացնելու Թագի դատարան:

33. 1969թ. Բնակարանային օրենքի գործողության ժամկետը, որը սկզբնապես ընդունվել էր երեք տարի ժամկետով, երկարացվել է մինչև 1975թ. դեկտեմբերի 31-ը: 1976թ. հունվարի 1-ին այն փոխարինվել է 1975թ. Բնակարանային օրենքով: Նշված օրենսդրական ակտը պահպանել է տարբերությունը հանրամատչելի «բաց շուկայի տների» և «բնակության ցենզ» կամ թույլտվություն պահանջող «վերահսկվող տների» միջև: «Բնակության ցենզ» ունեցող բնակիչների կատեգորիաները շարադրվել են օրենքի 6-րդ բաժնում: Այն փոխել է «բնակության ցենզի» որոշման հիմքերը՝ թույլ տալով բնակության ցենզի ձեռքբերումը ոչ միայն որոշակի օրվա դրությամբ վերահսկվող տներում օրինական և արտոնված բնակությունից, այլ նաև որոշակի ժամկետով բնակությունից ելնելով (բաժին 6 (1) (j)): Դրա հետ մեկտեղ, որոշ դրույթներ նախատեսված էին պահպանելու առկա իրավունքները, մասնավորապես՝ «բնակության ցենզ» շարունակում էին ունենալ այն անձինք, ովքեր եղել էին Գրնսիի մշտական բնակիչներ 1938թ. հունվարի 1-ից մինչև 1957թ. հունիսի 30-ը, ինչպես նաև բնակարան են զբաղեցրել 1968 թ. հուլիսի 31-ին (բաժին 6 (1) (h)): Քանի որ

դիմողները չունեին «բնակության ցենզ», նրանց հարկավոր էր Բնակարանային հարցերով մարմինների թույլտվությունը:

Ինչ վերաբերում է թույլտվություն տրամադրելուն (3-րդ բաժին), 1975թ. Բնակարանային օրենսգրքի 5-րդ բաժնում թվարկվում են այն գործոնները, որոնք Բնակարանային հարցերով մարմինները պետք է հաշվի առնեն, ներառյալ , *inter alia*.

(ա) արդյո՞ք անձն ուներ համայնքի համար էական համարվող աշխատանք (1 (a) ենթաբաժին - «էական թույլտվություն» ունեցող),

(բ) արդյո՞ք բնակարանների քանակը, որը նույնական է տիրապետման ենթակա բնակարանների այն թվաքանակի հետ, որոնց վերաբերյալ ներկայացվել են դիմումներ, բավարար է «բնակության ցենզ» ունեցող անձանց բնակարանային պահանջները բավարարելու համար:

Այնուամենայնիվ, Բնակարանային հարցերով մարմիններն, իրենց գործողությունների ազատության իրավունքն իրականացնելիս՝ կարող էին հաշվի առնել «այնպիսի այլ գործոններ, որոնք հնարավոր է ժամանակ առ ժամանակ համարել անհրաժեշտ կամ նպատակահարմար» (2-րդ ենթաբաժին):

Ըստ Կառավարության՝ երկարատև սեփականության իրավունքը մի գործոն էր, որը Բնակարանային հարցերով մարմինները հաշվի էին առել այս կապակցությամբ, սակայն դրան էական կշիռ չէր տրվել՝ այլ առանձնահատկությունների բացակայության պայմաններում: Այն փաստը, որ որևէ դիմող նախկինում ունեցել է «բնակության ցենզ»՝ ըստ հին օրենքի, նույնպես մի գործոն էր, որը Բնակարանային հարցերով մարմինները պետք է հաշվի առնեին, սակայն ավելի մեծ կշիռ պետք է տրվեր այն ժամանակահատվածին, որը դիմողն իրականում անցկացրել էր Գրնսիում:

Օրենքի 19-րդ բաժինը նախատեսել էր թույլտվության մերժման դեմ թագի դատարան գանգատ ներկայացնելու իրավունք, այն դեպքում, երբ Բնակարանային հարցերով

մարմինների որոշումներն իրենց իրավասությունից դուրս են եղել կամ էլ հանդիսացել են իրենց իրավունքների ոչ ողջամիտ իրականացում:

24-րդ բաժինը հետևյալ կերպ է սահմանել բնակելի տարածքի ապօրինի զբաղեցման հանցանքը.

«Յուրաքանչյուր ոք,

(ա) ով զբաղեցնում է կամ պատճառ է դառնում, կամ էլ թույլ է տալիս որևէ այլ անձի զբաղեցնելու բնակելի տարածք՝ խախտելով սույն օրենքի ցանկացած դրույթ, կամ

(բ) ով խախտում է բնակարանային թույլտվության ցանկացած պայման,

մեղավոր է և պատասխանատու այնպիսի հանցանքի համար, որը պատժվում է հինգ հարյուր ֆունտ ստեռլինգի չափով տուգանքով, իսկ հանցանքը շարունակելու դեպքում՝ հավելյալ՝ հիսուն ֆունտ ստեռլինգը չգերազանցող տուգանքի՝ դատապարտումից հետո յուրաքանչյուր օրվա դիմաց»:

34. 1982թ. Բնակարանային (զբաղեցման վերահսկողություն) (Գրնսի) օրենքն ուժի մեջ է մտել 1982թ. նոյեմբերի 1-ին: Այն միտված է 1948թ. Բնակարանային օրենքից բխող նախկին «բնակարանային ցենզը» աստիճանաբար բնակության ժամկետային համակարգով փոխարինելուն: 10 տարի՝ Գրնսիում ծնված անձանց համար կամ Գրնսիում ծնված ծնողներ ունեցող անձանց համար, 15 տարի՝ հիմնական աշխատանք ունեցողների և նրանց ընտանիքների համար, և 20 տարի՝ թույլտվություն ունեցող այլ անձանց համար:

C. Գրնսիի բնակարանային վիճակի վերաբերյալ վիճակագրական տվյալներ

35. Գրնսին 62 քառակուսի կիլոմետր (24 քառակուսի մղոն) տարածք ունեցող կղզի է: 1939թ. կղզու բնակչությունը կազմել է 43,800, իսկ 1951թ.՝ 1948թ. Բնակարանային օրենքն ընդունելուց երեք տարի անց, այն կազմել է 45,747 մարդ: 1951թ. և 1976թ. միջև ընկած ժամանակահատվածում, մարդահամարի առկա տվյալներն արձանագրել են բնակչության աճ մինչև 54,057, սակայն 1981թ. դրությամբ բնակչության թիվը նվազել է մինչև 53,488: Այսօրվա դրությամբ կղզու բնակչությունը կազմում է մոտավորապես 55,000, մեկ քառակուսի մղոնին՝ միջինը 2,300 մարդ: Այս տվյալներով Եվրոպայի խորհրդի անդամ պետություններից Գրնսին ամենախիտ բնակեցված շրջաններից մեկն է: Բացի դրանից, ամառային ամիսների ընթացքում կղզի են այցելում ավելի քան 12,500 զբոսաշրջիկներ, ինչի հետևանքով բնակչության թիվը հասնում է քառակուսի մղոնին միջինը 2,750 մարդ:

Ըստ 1976թ. մարդահամարի՝ 1971-1975թթ. բնակչություն հաստատելու նպատակով 6,379 մարդ տեղափոխվել է Գրնսի և 4,093 մարդ այնտեղից հեռացել: 1976–1981թթ.՝ տվյալ գործին վերաբերող ժամանակահատվածում, 5,393 մարդ տեղափոխվել է կղզի, իսկ 5,817 մարդ այնտեղից հեռացել: Արտագաղթը 424 մարդով գերազանցել է ներգաղթը:

Կղզու տնտեսությունը կախված է այգեգործությունից, հողագործությունից և զբոսաշրջիկությունից, ինչպես նաև վերջին տարիներին՝ միջազգային ֆինանսական արդյունաբերությունից: Կղզու ամենամեծ դժվարություններից մեկը եղել է բնակչությանը բավարար կացարաններով ապահովելը՝ միաժամանակ գյուղական վայրերի և այլ տեղանքների համեմատաբար փոքր տարածքը պաշտպանելով չափից ավելի ընդլայնումից:

36. 1981թ. դեկտեմբերի 31-ին ուժի մեջ է եղել 1,776 թույլտվություն, որից ավելի քան 25 տոկոսը տրվել է 1977թ.-ից չորս տարվա ընթացքում:

Ըստ 1978-1985թթ. վիճակագրության տվյալների՝ որոշակի հավասարակշռություն էր պահպանվել Բնակարանային հարցերով մարմինների հատկացրած հիմնական և ոչ հիմնական թույլտվությունների միջև (տե՛ս վերը՝ 33-րդ կետ): Հիմնական թույլտվություն ունեցողների թիվը գերազանցում էր ոչ հիմնական թույլտվություն ունեցողների թիվը 1978, 1979, 1982, 1983 և 1984 թվականներին, սակայն 1980 և 1985 թվականներին տեղի էր ունեցել հակառակը:

Համաձայն Կառավարության տրամադրած վիճակագրական տվյալների՝ ոչ հիմնական թույլտվությունները մտնում են հետևյալ կատեգորիաներից որևէ մեկի մեջ.

1. անձինք, գլխավորապես զբոսաշրջիկության և այգեգործության ոլորտներում զբաղվածները, որոնց աշխատավորներին հատկացվող թաղամասերում բնակելի տարածք են տրամադրել իրենց գործատուները. 117-ը՝ 1978թ. և 119-ը՝ 1983թ.,
2. Գրնսի վերադարձած կամ Գրնսիում հաստատուն կապեր ունեցող անձինք. 152-ը՝ 1978թ. և 237-ը՝ 1983թ.,
3. թույլտվություն ունեցող թոշակառուները և 1975թ. ու 1982թ. օրենքների համաձայն երկարատև բնակության ուժով բնակության ցենզ ունեցող անձինք. 36-ը՝ 1978թ. և 154-ը՝ 1983թ.,
4. Ընտանեկան հանգամանքներով պայմանավորված և «en famille» (1982թ. օրենք) թույլտվություններ. 61-ը՝ 1978թ. և 184-ը՝ 1983թ.,
5. այլևայլ (ներառյալ 1950-ականներից մինչև 1960-ականների թույլտվությունները, եթե տուն է կառուցվել). 190-ը՝ 1978թ. և 124-ը՝ 1983թ.:

Թույլտվությունների խիստ պահանջարկի փաստի մասին վկայում է նաև մերժումների քանակը. 84-ը՝ 1979թ., 109-ը՝ 1980թ., 158-ը՝ 1983թ. և 197-ը՝ 1985թ.: Թույլտվություն չստացած դիմողների թվում էին նախորդ Բնակարանային օրենքի համաձայն «բնակության ցենզ» ունեցող անձինք, ինչպես նաև նախկինում հիմնական աշխատանք ունեցողները:

37. Ըստ 1981թ. պաշտոնական մարդահամարի վիճակագրական տվյալների՝ կղզում կար ընդամենը 18,716 բնակարան, որից 17,429-ը զբաղեցված էր, հետևաբար, 1,287-ը՝ ազատ (համեմատության կարգով՝ 1976թ. ազատ էր 1,040 բնակարան): 1981թ. մարդահամարի արդյունքները ցույց են տվել, որ չբնակեցված բնակարանների 35 տոկոսը կազմել են «զբոսաշրջիկության նպատակներին ծառայող բնակարանները», 12 տոկոսը հանված էին վաճառքի, 10 տոկոսը նորոգման մեջ էին և 29 տոկոսը՝ «բնակության համար պիտանի և հավանաբար ազատ՝ նոր բնակիչներ ընդունելու համար, կամ վաճառքի հանված լինելու պատճառով», 14 տոկոսը մնում է անորոշ:

Մյուս կողմից, չբնակեցված տների խնդրի վերաբերյալ 1978թ. Բնակարանային հարցերով մարմինների անցկացրած սահմանափակ հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ, չհաշված արձակուրդների համար օգտագործվող բնակարանները, խանութների վերևում գտնվող բնակարանները և մասամբ բնակեցված տները, միայն 92 բնակարան էր չբնակեցված և երկարատև զբաղեցման համար պիտանի: Սակայն դրանցից մի քանիսը կան կիսաքանդ էին, կան էլ շատ վատ վիճակում: Թեև Բնակարանային հարցերով մարմինները եզրակացրել են, որ չի եղել «իրավիճակի ոչ մի էական վատթարացում վերջին հետազոտությունից հետո», որն արվել էր 1974թ., այնուամենայնիվ, նրանք խորհուրդ են տվել, *inter alia*, բարեկարգել քաղաքների հին շենքերը:

ՎԱՐՈՒՅԹԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՄ

38. 1980թ. հունվարի 25-ին Հանձնաժողով ներկայացրած իրենց գանգատով (թիվ 9063/80) դիմողները բողոքել են՝ իրենց գործի նկատմամբ Բնակարանային օրենսդրության կիրառման դեմ: Մասնավորապես, նրանք հայտարարել են, որ իրենց նկատմամբ կիրառված՝ «Whiteknights»-ը զբաղեցնելու սահմանափակումները միջամտություն են հանդիսացել՝ իրենց տան նկատմամբ հարգանքի, ինչպես նաև իրենց գույքն անարգել օգտագործելու իրենց իրավունքների իրականցմանը: Նշված միջամտությունը նաև խտրականության բնույթ է կրել: Բացի դրանից, նրանք վիճարկել են, որ Գրնսիում անցկացված դատավարությունների ընթացքում տեղի է ունեցել դատարան դիմելու և արդար դատաքննության իրենց իրավունքների խախտում:

39. 1982թ. դեկտեմբերի 9-ին Հանձնաժողովը գանգատը հայտարարել է ընդունելի: 1984թ. հոկտեմբերի 3-ի իր ընդունած զեկույցում (Կոնվենցիայի 31-րդ հոդված) Հանձնաժողովը կարծիք է արտահայտել, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի և 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի (միաձայն) խախտում, իսկ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի (տասը ձայնով՝ ընդդեմ մեկի) և Կոնվենցիայի 14-րդ հոդվածի (միաձայն) խախտում տեղի չի ունեցել:

Կառավարության՝ Դատարանին ներկայացրած վերջնական բացատրությունները

40. 1986թ. փետրվարի լսումներին Կառավարությունը հաստատել է, ըստ էության, իր գրավոր բացատրություններում շարադրված վերջնական փաստարկները, որով Դատարանին առաջարկվել է որոշել և հայտարարել՝ (1) որ տեղի է ունեցել

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում՝ հաշվի առնելով դիմողների գործի նկատմամբ կիրառված հատուկ հանգամանքները, ինչպես հաստատել է Հանձնաժողովը, (2) որ ըստ փաստերի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում չի բացահայտվել, (3) որ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի՝ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի հետ համակցված, խախտում չի եղել, և (4) որ ըստ փաստերի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չի բացահայտվել՝ դիմողների վկայակոչած որևէ հիմքով:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ

I. Դիմողների գանգատները

41. Դիմողների հիմնական գանգատն ուղղված էր Գրնսիի բնակարանային օրենսդրության և իրենց դեպքի նկատմամբ նշված օրենսդրության կիրառման դեմ, որի հետևանքով, ըստ նրանց պնդման, իրենք զրկվել են իրենց բնակության իրավունքից: Նշված գանգատն ուղեկցվում էր ավելի ընդհանուր մի վիճարկմամբ, թե նշված օրենսդրությունը «արտագաղթի օրենսդրությանը փոխարինող» ակտ է եղել, հետևաբար՝ անվավեր է, քանի որ ըստ սահմանադրական համաձայնության՝ Գրնսին իրավասու չէր ընդունելու արտագաղթի և քաղաքացիության հարցերով օրենք: Դիմողները նաև պնդել են, որ իրենց «Whitknights» տունը զբաղեցնելու թույլտվության մերժման դեմ իրենց գանգատի հետ կապված, ինչպես նաև տունն ապօրինի զբաղեցնելու պատճառով հետագա հետապնդումների հետ կապված դատավարությունն անարդար էր և անցկացվել էր անկախությունից զուրկ՝ հնացած իրավական և դատական համակարգի միջոցով: Նրանք հիմնվել են, *inter alia*,

Կոնվենցիայի 6-րդ, 8-րդ, 14-րդ և 18-րդ հոդվածների և 1-ին Արձանագրության 1-ին և 4-րդ Արձանագրության 2-րդ հոդվածների վրա:

42. Նախ և առաջ, պետք է նշել, որ Դատարանը իրավասու չէ քննելու 4-րդ Արձանագրության հիման վրա դիմողների գանգատը, քանի որ Միացյալ Թագավորությունը չի վավերացրել այդ փաստաթուղթը:

II. Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վիճարկվող խախտումը

43. Դիմողները գանգատվել են, որ իրենք հանդիսանում են Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտման զոհեր, որը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

44. Հանձնաժողովում Կառավարությունն առարկել է վերը նշված վիճարկման դեմ՝ պնդելով, որ «Whitknights»-ը դիմողների «տունը» չէր: Սակայն Դատարանում Կառավարությունն այլևս չի պնդել իր այդ փաստարկը, քանի որ Հանձնաժողովում

գործի քննության արդյունքում բացահայտված փաստերից բխում է, որ դիմողները, նախկին ենթադրություններին հակառակ, որևէ այլ վայրում տուն չէին հիմնադրել: Բացի դրանից, Կառավարությունը նաև ընդունել է, որ թեև Բնակարանային հարցերով մարմինները բարեխղճորեն են գործել, սակայն առկա էին դիմողների դրության վրա ազդող բացառիկ հանգամանքներ, որոնք թույլտվության մերժումը դարձրել են անհամաչափ: Ուստի Կառավարությունն այլևս չի վիճարկել 8-րդ հոդվածի խախտման առկայությունը:

45. Դատարանը հաշվի է առնում Կառավարության վերը նշված դիրքորոշումը, սակայն գտնում է, որ Կառավարության պատասխանատվությունը ներառում է 8-րդ հոդվածի խախտումն անվիճելի հայտարարելը (տե՛ս *mutatis mutandis*, Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 1978թ. հունվարի 18-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 25, էջ 62, կետ 154):

A. Արդյո՞ք «Whiteknights»-ը պրն և տկն Գիլոունների «տունն» էր՝ Կոնվենցիայի արտահայտած իմաստով

46. Ըստ դիմողների՝ իրենք 1958թ. «Whiteknights»-ը հիմնադրել են որպես իրենց տուն: Չնայած որ նրանք հետագայում մեկնել են Գրնսիից, սակայն պահպանել էին տան նկատմամբ իրենց սեփականության իրավունքը, ինչպես նաև տանն էին թողել իրենց կահույքը, քանի որ նրանք մշտապես այնտեղ վերադառնալու նպատակ են ունեցել: Վերադառնալով 1979թ.՝ նրանք ապրել են իրենց տանը՝ նպատակ ունենալով մշտական բնակություն հաստատել՝ Բնակարանային հարցերով մարմինների հետ իրենց բնակության կարգավիճակը որոշելու շուրջ բանակցությունների ավարտից և տան անհրաժեշտ նորոգում կատարելուց հետո:

Նշված հայտարարությունները, որոնց հավաստիությունը Ռատարանը պատճառ չունի կասկածելու, հիմնավորվում են այն փաստով, որ 1956թ. դիմողները վաճառել են Լանկաշիրում իրենց տունը և ընտանիքով ու իրենց գույքով տեղափոխվել Գրնսի (տե՛ս վերը՝ 9-րդ կետ): Բացի դրանից, Ռատարանը համոզվել է, որ նրանք ոչ մի այլ տուն չէին հիմնադրել Միացյալ Թագավորության տարածքում: Թեև դիմողները տասնինը տարի բացակայել են Գրնսիից, սակայն այդ պարագայում նրանք բավարար շարունակական կապեր են պահպանել «Whitekights»-ի հետ, և այդ իսկ պատճառով վիճելի միջոցառումների ժամանակահատվածում այն կարող էր համարվել իրենց «տունը»՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով:

B. Արդյո՞ք պետական մարմինները միջամտել են դիմողների՝ իրենց «տան» նկատմամբ հարգանքի իրավունքի իրականացմանը

47. 1969թ. Բնակարանային օրենքի ընդունումից հետո, որն այդ առումով փոփոխության չէր ենթարկվել 1975թ. Բնակարանային օրենքով, դիմողները ստիպված են եղել «Whiteknights»-ը զբաղեցնելու համար թույլտվություն հայցել, քանի որ օրենքում կատարված փոփոխության հետևանքով նրանք կորցրել էին իրենց «բնակության ցենզը» (տե՛ս վերը՝ 32-րդ և 33-րդ կետեր): Ռատարանի կարծիքով՝ այն փաստը, որ 1979թ. Գրնսի վերադառնալուց հետո նրանք՝ հետապնդման սպառնալիքով, ստիպված են եղել թույլտվություն ձեռք բերել իրենց սեփական տանը բնակվելու համար, ինչպես նաև թույլտվությունների մերժումը, քրեական վարույթի հարուցումը նրանց նկատմամբ՝ սեփականության ապօրինի զբաղեցման համար, նաև պրն Գիլրոուի դատապարտումն ու տուգանքի նշանակումը միջամտություն են եղել դիմողների՝ իրենց տան նկատմամբ հարգանքի իրավունքի իրականացմանը:

C. Արդյո՞ք միջամտությունները եղել են արդարացված

48. Որոշելու համար, թե արդյո՞ք նշված միջամտությունները արդարացված են եղել 8-րդ հոդվածի 2-րդ կետի պայմաններով, Ռատարանը պետք է հաջորդաբար քննության առնի, թե արդյո՞ք միջամտությունները եղել են «օրենքով նախատեսված», արդյո՞ք միջամտությունն ունեցել է նպատակ, որն իրավաչափ էր ըստ այդ կետի, և արդյո՞ք միջամտությունները եղել են «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում»՝ վերոհիշյալ նպատակների համար:

1. «Օրենքով նախատեսված»

49. Դիմողները պնդել են, որ միջամտությունները չեն եղել «օրենքով նախատեսված»: Նախ՝ Բնակարանային օրենսդրությունն արտագաղթի օրենսդրության քողարկված ձևն էր, իսկ վերջինս Գրնսիի Պետական խորհրդի օրենսդրական լիազորություններից դուրս էր: Երկրորդ՝ Բնակարանային օրենսդրությունն անըմբռնելի և դժվարին էր, մասնավորապես հստակ չէին «զբաղեցում» բառի և «համայնքի համար էական աշխատանք» արտահայտության իմաստները: Եվ վերջապես՝ այդ օրենսդրությունը թույլտվություններ տալու հարցում Բնակարանային հարցերով մարմիններին գործողությունների այնպիսի լայն ազատություն էր տալիս, որ նրանց որոշումներն անկանխատեսելի էին:

Կառավարությունը ժխտել է նշված փաստարկներից առաջինը՝ պնդելով, որ Բնակարանային օրենսդրությունը նախատեսված էր Գրնսիում հաստատուն կապեր կամ հաղորդակցություն ունեցող անձանց, ինչպես նաև կղզու տնտեսական և

սոցիալական շահերի համար էական համարվող աշխատանք կատարող անձանց՝ կղզուև բավարար քանակով տներով ապահովելու համար: Ինչ վերաբերում է երկրորդ և երրորդ փաստարկներին, Կառավարությունը, ինչպես և Հանձնաժողովը, համարում է, որ 1975թ. Բնակարանային օրենքի համապատասխան դրույթները բավարարում էին Դատարանի նախադեպային իրավունքով հաստատված՝ մատչելիության և կանխատեսելիության պահանջները (տե՛ս, *inter alia*, Սանդի Թայմսի 1979թ. ապրիլի 26-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 30, էջ 31, 49-րդ կետ, նաև Սիլվերի և այլոց 1983թ. մարտի 25-ի վճիռը, Շարքեր Ա, թիվ 61, էջ 33, 87-88-րդ կետեր):

50. Ինչ վերաբերում է դիմողների առաջին փաստարկին, Դատարանը նշում է, որ 1975թ. Բնակարանային օրենքը, բնականոն օրենսդրական ընթացակարգի համաձայն, պատշաճ կերպով վավերացվել է Թագուհու կողմից, գրանցվել է Գրնսի կղզու գրառումներում և հրատարակվել է: Ուստի նշված օրենսդրական ակտի սահմանադրական վավերականության և մատչելիության վերաբերյալ ոչ մի կասկած չի կարող լինել:

51. Կանխատեսելիության պահանջի առնչությամբ Դատարանը վկայակոչել է սահմանված նախադեպային իրավունքը (տե՛ս վերը՝ Սանդի Թայմսի վճիռը, *loc. cit.*, և վերը նշված Սիլվերի և այլոց վճիռը, *loc. cit.*):

Ինչ վերաբերում է տվյալ գործի փաստերին՝ 1975թ. Բնակարանային օրենքի 5-րդ բաժնում շարադրված են այն գործոնները, որոնք Բնակարանային հարցերով մարմինները պետք է հաշվի առնեն վերահսկվող շուկայի տները զբաղեցնելու վերաբերյալ դիմումների քննարկման ժամանակ (տե՛ս վերը՝ 33-րդ կետ), և հենց այդ գործոնների հիման վրա էր, որ դիմողներին թույլտվությունը մերժվել է (տե՛ս վերը՝ 15-րդ և 16-րդ կետեր): Ճիշտ է, որ օգտագործված արտահայտություններից մի քանիսը (օրինակ՝ «համայնքի համար էական համարվող աշխատանք») Բնակարանային հարցերով մարմիններին որոշ չափով գործողությունների ազատության

հնարավորություն են տալիս: Այս հնարավորությունն ավելի է ընդլայնվում այն փաստով, որ 5 (2) բաժինը Բնակարանային հարցերով մարմիններին թույլ է տալիս հաշվի առնել «նման այլ գործոններ», որոնք նրանք անհրաժեշտ կամ նպատակահարմար կգտնեն (տե՛ս վերը՝ 33-րդ կետ): Այնուամենայնիվ, ինչպես նշել է Կառավարությունը, սա թույլ է տալիս Բնակարանային հարցերով մարմիններին հաշվի առնել ոչ միայն բնակարանային դրությունը տվյալ պահին, այլ նաև յուրաքանչյուր դեպքի մասնավոր հանգամանքները՝ համադրելով հասարակական շահն անհատի շահի հետ: Բացի դրանից, գործողությունների նման ազատության իրականացումը, զանգատի առկայության դեպքում, ենթակա է Թագի դատարանի վերահսկողությանը (1975թ. Բնակարանային օրենքի 19-րդ բաժին):

Օրենքը, որը նախատեսում է գործողությունների ազատություն, ինքնին անհամատեղելի չէ կանխատեսելիության պահանջի հետ, միայն եթե այդ ազատության շրջանակը և իրականացման եղանակը, նկատի ունենալով քննարկվող հարցի իրավաչափ նպատակը, բավականաչափ պարզությամբ են նշված՝ անհատին կամայական միջամտություններից պատշաճ պաշտպանություն տրամադրելու համար (տե՛ս 1984թ. օգոստոսի 2-ի Մալոնեի վճիռը, Շարքեր Ա, թիվ 82, էջ 33, 68-րդ կետ): Տվյալ գործով՝ Դատարանը գտնում է, որ գործողությունների ազատության շրջանակը, այդ ազատության իրականացման դատական վերահսկողության դրույթի հետ մեկտեղ, բավարարում է «օրենքի համաձայն» արտահայտությանը ներհատուկ՝ Կոնվենցիայի պահանջները:

Ինչ վերաբերում է Բնակարանային օրենքում «զբաղեցում» բառի սահմանման բացակայությանը՝ Դատարանը նշում է, որ այդ առօրյա գործածություն ունեցող բառի իմաստը կարելի է հստակորեն եզրակացնել այն համատեքստից, որում այն օգտագործված է, ինչպես նաև Բնակարանային հարցերով մարմինների պրակտիկայից, որի լիարժեք բացատրությունը տրվել էր դիմողներին ուղղված մի

քանի նամակներում (տե՛ս վերը՝ 13, 15, 16, 18, 19 և 20 կետեր): Ամեն դեպքում պետք է որոշվի՝ «զբաղեցում» եղել է, թե՛ ոչ:

52. Այսպիսով, Դատարանը եզրակացնում է, որ խնդրո առարկա միջամտությունները եղել են «օրենքով նախատեսված»:

2. Իրավաչափ նպատակ

53. Կառավարությունը պնդել է, որ Բնակարանային օրենսդրությունը և թույլտվությունների համակարգն ընդհանուր առմամբ հետապնդել են իրավաչափ նպատակ, այն է՝ Գրնսիում հաստատուն կապեր կամ հաղորդակցություն ունեցող անձանց՝ կղզում բնակարաններով ապահովելը, ինչպես նաև հնարավոր գերբնակչության հիմնախնդրի լուծումը՝ հաշվի առնելով կղզու ընդհանուր բնակչության խտությունը և կղզու տնտեսական, գյուղատնտեսական և զբոսաշրջիկության շահերը:

Թեև ընդունելով, որ հասարակության աղքատ խավին բավարար թվով տներով ապահովելը Նահանգի համար իրավաչափ նպատակ էր, այնուամենայնիվ, դիմողները պնդել են, որ Բնակարանային օրենսդրության առաջնային նպատակն է եղել կանխել և վերահսկել ցածր հարկերով հրապուրված բրիտանացիների տեղաշարժը դեպի Գրնսի: Հետևաբար, նշված օրենսդրությունը եղել է «արտագաղթի օրենսդրությանը փոխարինող» մի ակտ, որի կիրառումը խախտել է Կոնվենցիայի 18-րդ հոդվածը:

54. Դատարանը հիշատակել է Գրնսիի բնակչության և չբնակեցված տների թվաքանակի վերաբերյալ Կառավարության և դիմողների ներկայացրած վիճակագրական տվյալները (տե՛ս վերը՝ 35-րդ և 37-րդ կետեր):

Չնայած որ իրավիճակը, կարելի է ասել, որոշ չափով բարելավվել էր 1976- 1981թթ., սակայն դա չի փոխում այն փաստը, որ կղզու տարածքը շատ սահմանափակ է: Ջետևաբար, կղզու հավասարակշիռ տնտեսական զարգացումն ապահովելու համար բնակչության թիվը սահմանափակելու առումով պետական մարմինների ջանքերն իրավաչափ են: Այս կապակցությամբ, իրավաչափ է նաև կղզու հետ հաստատուն կապեր ունեցող անձանց, ինչպես նաև համայնքի համար էական աշխատանք կատարող անձանց որոշ նախապատվություն տալը՝ մատչելի գներով վարձակալության տրվող տների բնակեցման համար թույլտվությունների հատկացման հարցը որոշելիս: Այսպիսով, գործին առնչվող օրենսդրությունը նախատեսված էր նպաստելու կղզու տնտեսական բարեկեցութանը: Դատարանը չի գտնում, որ առկա է ապացույց առ այն, որ նշված օրենսդրությունը որևէ այլ նպատակ է հետապնդել (տե՛ս Կոնվենցիայի 18-րդ հոդվածը):

3. «Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»

55. Ինչ վերաբերում է ժողովրդավարական հասարակությունում՝ ձեռնարկված միջոցների «անհրաժեշտության» գնահատմանն առնչվող սկզբունքներին, պետք է հղում կատարել Դատարանի նախադեպային իրավունքին (տե՛ս Լինգենսի 1986թ. հուլիսի 8-ի հայտնի վճիռը, Շարքեր Ա, թիվ 103, էջեր 25-26, կետեր 39-40): «Անհրաժեշտություն» հասկացությունը ենթադրում է անհետաձգելի հասարակական կարիք, մասնավորապես՝ կիրառվող միջոցը պետք է համաչափ լինի հետապնդվող իրավաչափ նպատակին: Բացի դրանից, պետական մարմինների գնահատման ազատության շրջանակը կախված է ոչ միայն սահմանափակման նպատակի բնույթից, այլ նաև իրականացվող իրավունքի բնույթից: Տվյալ գործում՝ Գրնսիի տնտեսական բարեկեցությունը պետք է հավասարակշռվի դիմողների՝ «տան» նկատմամբ

հարգանքի իրավունքի հետ, որը, ըստ էության, վերաբերում է նրանց անձնական անվտանգությանը և բարեկեցությանը: Պետք է հաշվի առնել անհատի՝ այսպիսի իրավունքի կարևորությունը՝ Կառավարության գնահատման ազատության շրջանակը որոշելիս:

56. Նախ պետք է քննել, թե արդյո՞ք իրենց տունն զբաղեցնելու թույլտվություն հայցելու՝ Բնակարանային հարցերով մարմինների կողմից դիմողների վրա դրված պարտավորությունը համապատասխանում է նշված սկզբունքներին (տե՛ս վերը՝ 47-րդ կետը):

Դիմողները բավականին մեծ կշիռ են տվել այն փաստերին, որ 1976-1981թթ. Գրնսիում բնակչության թվի աննշան անկում է գրանցվել, և որ որոշ քանակությամբ բնակարաններ՝ 1981թ. մարդահամարի վիճակագրական տվյալների համաձայն, հայտարարվել էին չբնակեցված (տե՛ս վերը՝ 35-րդ և 37-րդ կետեր): Դիմողները եզրակացրել են, որ բնակարանային վերահսկողության օրենսդրության համար այլևս անհետաձգելի հասարակական կարիք գոյություն չուներ:

Կառավարությունը պատասխանել է, որ թեև օրենսդրությանը հաջողվել էր կղզում բնակելի տարածքների վրա ճնշումը պահել ընդունելի սահմաններում, սակայն դա չէր նշանակում, որ կարելի էր վերահսկող համակարգից հրաժարվել՝ առանց կղզու շահերին զգալի վնաս հասցնելու:

Ճանաչելով այն փաստերի պատշաճությունը՝ որոնց վրա հենվում են դիմողները, Դատարանը համարում է, որ Գրնսիի օրենսդիրը միջազգային դատավորից ավելի լավ կարող է գնահատել բնակարանային վերահսկողության ցանկացած ժամանակավոր դադարեցման հետևանքները: Բացի դրանից, թույլտվություն տալու կամ չտալու հարցը որոշելիս՝ Բնակարանային հարցերով մարմինները կարող էին իրենց

գործողությունների ազատությունն իրականացնել՝ կոնկրետ դեպքերում անհամաչափությունից խուսափելով (տե՛ս վերը՝ 33-րդ և 51-րդ կետեր): Չեռևաբար, իրենց «տանը» բնակվելու համար թույլտվություն հայցելու՝ օրենքով սահմանված պարտավորությունը չի կարող անհամաչափ համարվել հետապնդվող իրավաչափ նպատակին:

Այսպիսով, ինչ վերաբերում է վիճարկվող օրենսդրության պայմաններին՝ 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

57. Այնուամենայնիվ, մնում է այն հարցը, թե արդյո՞ք դիմողների նկատմամբ Բնակարանային հարցերով մարմինների գործողությունների ազատության իրականացման եղանակը, այն է՝ ժամանակավոր և մշտական թույլտվությունների մերժումը, ինչպես նաև հետապնդման նպատակով հարցի ներկայացումը իրավապահ մարմիններին (տե՛ս վերը՝ 15, 16, 19, 20, 21 և 23 կետեր), բխե՞լ է արդյոք անհետաձգելի հասարակական կարիքից, մասնավորապես՝ եղե՞լ է արդյոք համաչափ հետապնդվող իրավաչափ նպատակ:

Ռատարան ներկայացված վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ գործին վերաբերող ժամանակահատվածում, այն է՝ 1976թ. և 1980թ., կղզու բնակչության թիվը նախորդ տարիների մակարդակի սահմաններում էր՝ անգամ աննշան նվազումով (տե՛ս վերը՝ 35-րդ կետ), և զբաղեցման ենթակա առկա տների թիվը ոչ մի զգալի նվազման չէր ենթարկվել (տե՛ս վերը՝ 37-րդ կետ): Նշված հանգամանքներում՝ Ռատարանը, թեև չանտեսելով այն փաստը, որ կղզու՝ քառակուսի մղոնի վրա բնակչության միջին թիվը մնում էր բարձր՝ համեմատած այլ երկրների հետ, համարում է, որ դիմողների մասնավոր հանգամանքներին անբավարար կշիռ է վերապահվել: Նրանք կառուցել էին «Whitknights»-ը որպես իրենց և իրենց ընտանիքի մշտական բնակության վայր: Այն ժամանակ նրանք «բնակության ցենզ» ունեին՝ ընդհուպ մինչև 1969թ. Բնակարանային օրենքի ուժի մեջ մտնելը, այնպես որ, այդ

ժամանակահատվածում նրանք իրավունք ունեին տունը բնակեցնելու առանց թույլտվության: Տունը պրն և տկն Գիլոունների մշտական բնակության վայրն է եղել երկու տարվա ընթացքում՝ մինչև Գրնսիից 1960թ. նրանց մեկնելը: Դրանից հետո նրանք պահպանել էին տան նկատմամբ սեփականության իրավունքը և իրենց կահույքը թողել էին այդ տանը: Տունը տասնութ տարիների ընթացքում վարձակալության հանձնելով Բնակարանային հարցերով մարմինների կողմից հավանության արժանացած վարձակալների՝ դիմողները ներդրում են կատարել Գրնսիի բնակարանային ֆոնդ: 1979թ. վերադառնալով՝ նրանք ոչ մի այլ «տուն» չեն ունեցել ո՛չ Միացյալ Թագավորությունում, ո՛չ էլ որևէ այլ վայրում: «Whiteknights»-ն ազատ էր, և նոր վարձակալ չէր ակնկալվում:

Ինչ վերաբերում է ժամանակավոր թույլտվությունների մերժմանը՝ Բնակարանային հարցերով մարմինների որոշումները, չնայած բարեհաճության որոշ ժամանակահատվածների, էլ ավելի ապշեցուցիչ են: Տասնութ տարի վարձակալության տալուց հետո՝ «Whiteknights»-ում հարկավոր էր նորոգում կատարել, ինչի հետևանքով որոշ ժամանակ, դիմողներից բացի, այլ անձ չէր կարող զբաղեցնել տունը:

Վերջապես, ինչ վերաբերում է հետապնդման նպատակով գործը իրավապահ մարմիններին հանձնելուն՝ Կառավարությունը հայտնել է, որ Բնակարանային հարցերով մարմինները մի քանի առիթով հետաձգել են այդ քայլի ձեռնարկումը (տե՛ս վերը՝ 18-րդ և 19-րդ կետեր): Սակայն նշված փաստը, Դատարանի կարծիքով, էականապես չի մեղմացրել պրն և տկն Գիլոունների արդեն իսկ անհուսալի վիճակը:

58. Հետևաբար, Դատարանը եզրակացնում է, որ Բնակարանային հարցերով մարմինների՝ դիմողներին «Whiteknights»-ն զբաղեցնելու մշտական և ժամանակավոր թույլտվությունները մերժելու որոշումները, ինչպես նաև պրն Գիլոուի

դատապարտումն ու տուգանքի սահմանումը հանդիսացել են միջամտություն դիմողների՝ իրենց «տան» նկատմամբ հարգանքի իրավունքի իրականացմանը, որն անհամաչափ էր հետապնդվող իրավաչափ նպատակին:

Այսպիսով, տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում՝ դիմողների գործի մասնավոր հանգամանքներում օրենսդրության կիրառման մասով:

III. 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի վիճարկվող խախտումը

59. Այնուհետև դիմողները պնդել են, որ իրենց գործով տեղի է ունեցել 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում, որը սահմանում է.

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ՝ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում, իր հիմնական շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս տուրքերի կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

60. 1986թ. հոկտեմբերի 10-ի նամակով Կառավարության ներկայացուցիչը, մեծ ափսոսանք հայտնելով, որ այն ուղարկում է վարույթի ուշ փուլում, հաղորդել է Դատարանին, որ Միացյալ Թագավորությունը 1-ին Արձանագրության կիրառելիությունը չէր տարածել Գրնսիի Բեյլիվիկի վրա՝ համաձայն նույն Արձանագրության 4-րդ կետի, որը սահմանում է.

«Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ստորագրելիս կամ վավերացնելիս կամ դրանից հետո ցանկացած ժամանակ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ներկայացնել հայտարարություն՝ նշելով այն շրջանակները, որի սահմաններում ինքը պարտավորվում է կիրառել սույն Արձանագրության դրույթները այն տարածքների նկատմամբ, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է ...»:

Նշված նամակի մասին տեղեկանալով՝ Հանձնաժողովի պատվիրակը մեկնաբանել է, որ Կառավարությունը «պետք է համարվի Հանձնաժողովի ad hoc իրավագործությունը ճանաչած»՝ գործը 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա քննելու համար: Պատվիրակը նշել է, որ Դատարանը պետք է քննության առնի, թե արդյո՞ք տվյալ հանգամանքներում (ներառյալ, մասնավորապես, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտման ընդունումը Կառավարության կողմից) «անհրաժեշտ է որևէ եզրակացություն տալ» նշված Արձանագրության հիման վրա ներկայացված գանգատի վերաբերյալ: Այն դեպքում, եթե Դատարանը գտնի, որ անհրաժեշտ է նշված գանգատի վերաբերյալ վճիռ կայացնել, «պատվիրակը պատրաստ կլինի մանրամասն բացատրություններ ներկայացնել այն հիմնախնդիրների ամբողջության վերաբերյալ», որոնք բարձրացվել են Կառավարության նամակում:

61. Կառավարության նամակը ձևակերպված չէ որպես նախնական առարկություն՝ Դատարանի կանոնակարգի 47-րդ կանոնի իմաստով: Եվ, իրոք, եթե այն նախնական առարկության ձևով լիներ, ապա կլիներ ժամկետանց և չէր ընդունվի: Այնուամենայնիվ, ըստ Դատարանի՝ 1-ին Արձանագրության 4-րդ հոդվածի հիման վրա արված հայտարարության առկայությունը ենթակա է ex officio Դատարանի քննության, քանի որ այն վերաբերում է հենց Գրնսի կղզու նկատմամբ 1-ին Արձանագրության կիրառելիությանը:

62. Ինչ վերաբերում է Գրնսի կղզու նկատմամբ 1-ին Արձանագրության 4-րդ հոդվածի կիրառելիությանը՝ Դատարանը հստակեցրել է, որ Միացյալ Թագավորության նկատմամբ կիրառվող պայմանագրերի և միջազգային համաձայնագրերի առնչությամբ Նորմանդական կղզիների կարգավիճակի վերաբերյալ 1950թ. հոկտեմբերի 16-ին Միացյալ Թագավորության անունից ներկայացվել է հայտարարություն, որը ծանուցվել է բոլոր օտարերկրյա կառավարություններին, որոնց հետ Միացյալ Թագավորության կառավարությունը դիվանագիտական հարաբերություններ ուներ, Միացյալ ազգերի և այլ միջազգային կազմակերպությունների, ներառյալ, *inter alia*, Եվրոպայի խորհրդին: Նշված հայտարարության համաձայն՝ Գրնսի կղզին պետք է համարվի «տարածք, որի միջազգային հարաբերությունների համար պատասխանատու է [Միացյալ Թագավորությունը]»՝ նշված Արձանագրության 4-րդ հոդվածով սահմանված պայմանագրերի վերաբերյալ դրույթների նպատակով: Այս պրակտիկան կիրառվել է Եվրոպայի խորհրդի շրջանակներում կնքված պայմանագրերի, այդ թվում՝ Կոնվենցիայի (63-րդ հոդված) վերաբերյալ: Այսպիսով, 4-րդ հոդվածի բովանդակությունից հստակորեն հետևում է, որ Արձանագրությունը Գրնսի կղզու նկատմամբ կիրառելու համար պահանջվում է հստակ հայտարարություն: Եվրոպայի խորհրդի արձանագրությունների համաձայն՝ Գրնսի կղզու նկատմամբ 1-ին Արձանագրության դրույթների կիրառման վերաբերյալ ոչ մի այդպիսի հայտարարություն Միացյալ Թագավորությունը չի ծանուցել Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Ելնելով նշված հանգամանքներից՝ Դատարանը եզրակացնում է, որ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի չէ սույն գործում, և որ Դատարանն իրավասու չէ զանգատներ ընդունելու՝ նշված դրույթների հիման վրա:

IV. Կոնվենցիայի 14-րդ հոդվածի՝ 8-րդ հոդվածի հետ համակցված, վիճարկվող խախտումը

63. Դիմողները նաև պնդել են, որ Բնակարանային օրենսդրությունը, բրիտանական այլ քաղաքացիների համեմատ, խտրական մոտեցում է սահմանել՝ հօգուտ Գրնսիում ծնված կամ Գրնսիի հետ սերտ կապեր ունեցող անձանց՝ «բնակության ցենզ» ձեռք բերելու կապակցությամբ: Այնուհետև, նրանք հայտարարել են, որ Բնակարանային օրենսդրությամբ «բաց շուկայի տների» կատեգորիայի սահմանումը (տե՛ս վերը՝ 30-րդ և 33-րդ կետեր) խտրականություն է առաջացնում հարուստների օգտին, ովքեր կարող էին գնել և զբաղեցնել որոշակի հարկման ենթակա արժեքից ավելի արժեք ունեցող տներ, ովքեր ազատվում էին Բնակարանային հարցերով մարմինների վերահսկողությունից: Այս կապակցությամբ դիմողները հիմնվել են Կոնվենցիայի 14-րդ հոդվածի վրա, որը սահմանում է.

«Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

64. Տվյալ գործում առաջացած վիճարկվող խտրականության հարցերը վերաբերում են ոչ թե Բնակարանային հարցերով մարմինների՝ 1975թ. օրենքի 3-րդ և 5-րդ բաժինների համաձայն գործողությունների ազատությունն իրականացնելիս ձեռնարկած միջոցներին, այլ Օրենքի 6-րդ բաժնի համաձայն անձանց որոշակի խմբերի տրամադրված նախապատվությանը (տե՛ս վերը՝ 33-րդ կետ)՝ դիմողների

իրավիճակում գտնվող անձանց համեմատ, որոնք Գրնսիում սեփականություն զբաղեցնելու համար պետք է թույլտվություն ձեռք բերեին: Դատարանը պետք է քննի դիմողների գանգատը՝ նախադեպային իրավունքում հաստատված սկզբունքների համաձայն. 14-րդ հոդվածի նպատակի համար՝ վերաբերմունքի տարբերությունը համարվում է խտրականություն, եթե այն «չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում», այսինքն՝ եթե այն «իրավաչափ նպատակ» չի հետապնդում, այսինքն՝ եթե գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համամասնության ողջամիտ հարաբերակցություն:

65. Դատարանն արդեն ընդունել է, որ կղզու հետ հաստատուն կապ ունեցող անձանց նկատմամբ նախապատվելի վերաբերմունքն իրավաչափ է՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների նպատակով (տե՛ս վերը՝ 54-րդ կետ): Դատարանը 8-րդ հոդվածի հետ համատեղ, 14-րդ հոդվածի վերաբերյալ այլ որոշում ընդունելու ոչ մի պատճառ չի գտնում: Ավելին, Դատարանին ներկայացված վիճակագրական տեղեկատվությունից չի հետևում, որ 1975թ. Բնակարանային օրենսդրությամբ հիմնված վերահսկիչ համակարգն անհամաչափ էր հետապնդվող նպատակին, մասնավորապես՝ երբ հաշվի է առնվում այն ճկունությունը, որը թույլատրված է Օրենքի կիրառման գործընթացում՝ օրենքի 3-րդ և 5-րդ բաժիններով նախատեսված՝ Բնակարանային հարցերով մարմիններին տրված գործողությունների ազատությամբ: Այսպիսով, վերաբերմունքի վիճարկվող տարբերությունը, Դատարանի կարծիքով, ունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում:

66. Ինչ վերաբերում է գույքային դրությանը կամ հարստության հիմքով վիճարկվող խտրականությանը՝ հարկման ենթակա արժեքի սահմանափակման կիրառումը ցույց է տալիս Կառավարության ցանկությունը՝ բացառելու Բնակարանային հարցերով մարմինների վերահսկողությունը թանկարժեք տների փոքր տոկոսի (10 տոկոս) նկատմամբ, որոնք, հավանաբար, պահանջարկ կունենային

հարուստ անձանց կողմից, որոնք համարվում են պաշտպանության կարիք չունեցող, միաժամանակ անհրաժեշտ պաշտպանություն ապահովելով ավելի սահմանափակ միջոցներ ունեցող անձանց համար, որոնք հաստատուն կապեր ունեն Գրնսիի հետ: Դիմողներն իրենք էլ են համաձայնել, որ հասարակության ավելի աղքատ խավին բավարար թվով բնակարաններով ապահովելու պետության ջանքերն իրավաչափ են (տե՛ս վերը՝ 53-րդ կետ): Նկատի ունենալով ընդհանուր շահերից ելնող հետապնդվող իրավաչափ նպատակները, ինչպես նաև հաշվի առնելով պետության՝ գնահատման շրջանակը, տարբերակված մոտեցման քաղաքականությունը չի կարելի համարել ոչ ողջամիտ կամ անհամաչափ բեռ դնող համեստ տների սեփականատերերի վրա, որպիսիք են նաև դիմողները՝ հաշվի առնելով թույլտվության համակարգով նրանց տրամադրվող հնարավորությունները (տե՛ս վերը՝ 33-րդ կետ):

67. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ գործի փաստերը չեն վկայում Կոնվենցիայի 14-րդ հոդվածի՝ 8-րդ հոդվածի հետ համակցված, խախտման մասին:

V. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վիճարկվող խախտումը

68. Վերջապես՝ դիմողները գանգատվել են 6-րդ հոդվածի 1-ին կետի հետևյալ դրույթների խախտման առնչությամբ.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի ... անկախ և անաչառ դատարանի կողմից ... արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

Դիմողները վիճարկել են երկու տարբեր դատավարությունների արդար լինելը: Առաջինը՝ Բնակարանային հարցերով մարմինների՝ «Whiteknights»-ի զբաղեցման

թույլտվությունների մերժման որոշումների դեմ տկն Գիլոուի՝ Թագի դատարան ներկայացրած գանգատը (տե՛ս վերը՝ 20-22-րդ և 25-րդ կետեր): Երկրորդը՝ տան ապօրինի զբաղեցման համար պրն Գիլոուի հետապնդումը, որն ավարտվել էր Մագիստրատի դատարանի կողմից նրա դատապարտումով և հետագա գանգատով Թագի դատարան (տե՛ս վերը՝ 23-րդ և 26-րդ կետեր): Տկն Գիլոուի նկատմամբ քրեական գործի վարույթը խնդրո առարկա չէ 6-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա:

Առաջին դատավարությունը վերաբերում էր դիմողների՝ իրենց սեփական տունն զբաղեցնելու իրավունքին, որը հանդիսանում է քաղաքացիական՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով: Երկրորդ դատավարությունը վերաբերում էր քրեական մեղադրանքի որոշմանը և, հետևաբար, համապատասխանում է նշված հոդվածի քրեական հատվածին: Նշված երկու դատավարությունների կապակցությամբ 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիությունը փաստորեն չի վիճարկվել:

69. Ինչ վերաբերում է տկն Գիլոուի հարուցած քաղաքացիական գործի վարույթին, դիմողներն առարկել են, որ դատարան դիմելու նրա հնարավորությունն անարդարացիորեն կանխվել էր, քանի որ նրա գանգատը կարող էր ներկայացվել միայն փաստաբանի կողմից, որը, իրենց պարագայում, չէր կատարել իր պարտականությունները, ինչպես նաև այն պատճառով, որ նրանք այնպիսի դրության մեջ էին դրվել, որ ստիպված են եղել իրենց գանգատը ներկայացնել կա՛մ հյուրանոցից, կա՛մ էլ Գրնսիի սահմաններից դուրս որևէ այլ վայրից, հակառակ դեպքում նրանք կենթարկվեին հետապնդման: Նրանք նաև կրկնել են իրենց՝ 8-րդ հոդվածի համատեքստում արված հայտարարությունն այն մասին, որ Բնակարանային օրենսդրության մեջ բացակայում է «զբաղեցում» բառի սահմանումը:

Այս վերջին հարցի կապակցությամբ Դատարանը հաստատում է իր որոշումը՝ 8-րդ հոդվածի հիման վրա միջամտությունների օրինականության կապակցությամբ (տե՛ս վերը՝ 51-րդ կետ): Ինչ վերաբերում է մյուս գանգատներին՝ Դատարանը նախ և առաջ

նշում է, որ փաստաբանի միջոցով բարձր ատյանի դատարան գանգատ ներկայացնելու պահանջը Եվրոպայի խորհրդի մի քանի անդամ պետությունների իրավական համակարգերում ընդունված կարգ է: Ճիշտ է, որ տվյալ գործով դիմողների փաստաբանը պատշաճորեն չէր կատարել իր պարտականությունները, ինչի համար նա դիտողություն է ստացել (տե՛ս վերը՝ 27-րդ կետ): Այնուամենայնիվ, Թագի դատարանն ընդունել էր գանգատը, թեև այն ներկայացվել էր ժամկետանց՝ հատուցելով փաստաբանի սխալի դիմաց (տե՛ս վերը՝ 22-րդ կետ): Վերջապես՝ Դատարանը համամիտ է Չանձնաժողովի հետ այն հարցում, որ դիմողներին չի հաջողվել ապացուցել, թե ինչպես է առանց հետապնդման ենթարկվելու իրենց տունն զբաղեցնելու թույլտվության մերժումը խոչընդոտ հանդիսացել դատարան դիմելու իրենց իրավունքի իրականացմանը:

70. Ինչ վերաբերում է ապօրինի զբաղեցման համար հետապնդմանը՝ դիմողները բողոքել են, որ Մագիստրատի դատարանը, ըստ ընդունված պրակտիկայի, չէր հետաձգել պրն Գիլոուի գործով նիստը՝ մինչև հայտնի կդառնար Թագի դատարանի որոշումը տկն Գիլոուի ներկայացրած քաղաքացիական գանգատի կապակցությամբ (տե՛ս վերը՝ 23-րդ կետ): Դիմողների կարծիքով, դա արդարացի չէր, քանի որ պրն Գիլոուի դատապարտումը կանխորոշել էր քաղաքացիական գանգատի կապակցությամբ որոշումը, մինչդեռ վերջինս էլ կանխորոշել էր պրն Գիլոուի քրեական գործով գանգատը:

Դատարանը գտնում է, որ լսումների հետաձգումն սկզբունքորեն իրավասու ներպետական դատարանի հայեցողության շրջանակներում է: Բացի դրանից, տկն Գիլոուի քաղաքացիական գործով գանգատը չէր ներկայացվել մինչև քրեական գործով լսումների համար արդեն նշանակված օրը (տե՛ս վերը՝ 22-րդ և 23-րդ կետեր): Նշված պարագաներում Մագիստրատի որոշումը քննադատման ենթակա չէ:

71. Դիմողներն այնուհետև պնդել են, որ պրն Գիլոուի՝ իր դատապարտման դեմ գանգատի դատական քննության ընթացքում նրան չէր թույլատրվել, բնագիր ձայներիզը լսելով, ստուգել առաջին ատյանի դատարանի արձանագրությունների ճշգրտությունը:

Դատարանը նշում է, որ լսումների ձայնագրումն ընդունված կարգ չէ Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների դատարաններում, և չի կարող համարվել 6-րդ հոդվածի պահանջ: Դատարանը համամիտ է Հանձնաժողովի հետ, որ այդպիսի ձայնագրության գոյության դեպքում մեղադրյալին բնագիր ձայներիզի տրամադրումն սկզբունքորեն ներպետական դատարանի հայեցողության շրջանակներում է: Տվյալ գործում, թեև ձայներիզի տրամադրումը մերժվել էր, սակայն Թագի դատարանի քարտուղարն ստուգել էր արձանագրությունները և հայտարարել, որ դրանք ճշգրիտ են (տե՛ս վերը՝ 26-րդ կետ): Ապացույցները, այսպիսով, վկայում են, որ այս կապակցությամբ ոչ մի անարդարություն տեղի չի ունեցել:

Վերջապես, դիմողները նշել են, որ Թագի դատարանը ներկայացել է գրեթե նույն կազմով՝ և՛ տկն Գիլոուի քաղաքացիական գործով գանգատի քննությանը, և՛ պրն Գիլոուի քրեական գործով գանգատի քննությանը (տե՛ս վերը՝ 26-րդ կետ), և որ երդվյալ ատենակալներից մեկը տկն Գիլոուի դեմ հարուցված քրեական գործում հանդես է եկել որպես մագիստրատ, որը նախ հետաձգել է դատավարությունը, ապա այն դադարեցրել է sine die (տե՛ս վերը՝ 23-րդ կետ): Դիմողները նշել են նաև, որ մի այլ երդվյալ ատենակալ նախկինում եղել է Բնակարանային հարցերով մարմինների նախագահը:

Նշված գանգատները հարց են բարձրացնում, թե արդյո՞ք Թագի դատարանը, երբ քննության է առել Գիլոունների գանգատները, կարելի է համարել «անաչառ դատարան»՝ 6-րդ հոդվածի նպատակների համար:

73. Դատարանը նախ նշում է, որ թեև Թագի դատարանի քննած երկու գանգատների միջև եղել է փաստացի կապ, դրանք վերաբերել են երկու տարբեր անձանց և երկու տարբեր հարցերի. քաղաքացիական գործը վերաբերել է Բնակարանային հարցերով մարմինների կողմից տկն Գիլոուի թույլտվությունների մերժումների պատշաճությանը, մինչդեռ քրեական գործը վերաբերել է պրն Գիլոուի՝ «Whiteknight»-ի վիճարկվող ապօրինի զբաղեցմանը: Ծիշտ է, մի բացառությամբ, որ Թագի դատարանը նույն կազմով է մասնակցել թե՛ առաջին և թե՛ երկրորդ գործի քննությանը: Սակայն այս փաստը ինքնին չի կարող ողջամտորեն իրավաչափ կասկած հարուցել Թագի դատարանի անաչառության առումով: Իրականում, Կոնվենցիայի մասնակից պետություններում ընդունված է բարձր աստյանի դատարանների կողմից նմանատիպ կամ միմյանց առնչվող գործերի հերթականությամբ քննությունը:

Մնում են Թագի դատարանի երկու անդամների կողմնակալության վերաբերյալ դիմողների հայտարարությունները, այն է՝ երդվյալ ատենակալի, որը տկն Գիլոուի դեմ հարուցված քրեական գործով ավելի վաղ հանդես էր եկել որպես մագիստրատ և մյուս երդվյալ ատենակալի, որը նախկինում եղել է Բնակարանային հարցերով մարմինների նախագահը: Որպես մագիստրատ՝ առաջին ատենակալի ընդունած միակ որոշումը եղել է տկն Գիլոուի դեմ հարուցված գործի քննության հետաձգումը, ի վերջո՝ sine die: Ինչ վերաբերում է Բնակարանային հարցերով մարմինների նախկին նախագահին՝ Դատարանում ներկայացված ապացույցներից չի հետևում, որ նա քննության որևէ փուլում ուղղակի կամ անուղղակի կերպով ներգրավվել է դիմողների գործի քննությանը: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ նշված երկու երդվյալ ատենակալների՝ նախկինում իրականացրած գործառույթները բավարար չեն նրանց անաչառության վերաբերյալ իրավաչափ կասկած հարուցելու համար:

74. Համապատասխանաբար՝ Դատարանը եզրակացնում է, որ վերը նշված 69-րդ և 73-րդ կետերում քննարկված հարցերի առումով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում չի եղել:

75. Դիմողները, Դատարանին ներկայացրած իրենց գրավոր բացատրություններում, Թագի դատարանի դեմ մի շարք այլ գանգատներ են առաջադրել: Սակայն այդ գանգատները չեն ներկայացվել լսումների ժամանակ և, այդպիսով, Դատարանն անհրաժեշտություն չի տեսնում քննարկելու դրանք՝ նաև հաշվի առնելով այն փաստը, որ Թագի դատարանի քննարկվող որոշումներն արդեն նկատի են առնվել 8-րդ հոդվածի խախտման վերաբերյալ վճիռ կայացնելիս:

VI. Կոնվենցիայի 50-րդ հոդվածի կիրառումը

Դիմողները 50-րդ հոդվածի վերաբերյալ ոչ մի որոշակի պահանջ չեն ներկայացրել, սակայն իրենց դիրքորոշման արտահայտումը հետաձգել են մինչև Դատարանի ըստ էության վճռին ծանոթանալը: Նշված պայմաններում ո՛չ Կառավարությունը և ո՛չ էլ Հանձնաժողովը չեն կարողացել որևէ տեսակետ արտահայտել նշված հարցի վերաբերյալ:

Այսպիսով, տվյալ հարցի վերաբերյալ դեռ հնարավոր չէ որոշում կայացնել և այն պետք է հետաձգվի (Դատարանի կանոնակարգի 53-րդ կանոնի 1-ին կետ):

ԱՅՍ ՀԻՍՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

1. Վճռում է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել՝ վիճարկվող օրենսդրության պայմանների առնչությամբ,

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում՝ դիմողների գործում վիճարկվող օրենսդրության կիրառման առնչությամբ,

3. Վճռում է, որ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի՝ 8-րդ հոդվածի հետ համակցված, խախտում տեղի չի ունեցել,

4. Վճռում է, որ սույն վճռի 69-րդ և 73-րդ կետերում նշված գանգատների առնչությամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել և որ

անհրաժեշտություն չկա քննարկելու նշված հոդվածի առնչությամբ դիմողների մյուս գանգատները,

5. Վճռում է, որ 1-ին և 4-րդ արձանագրությունները կիրառելի չեն տվյալ գործի նկատմամբ,

6. Վճռում է, որ 50-րդ հոդվածի կիրառման հարցը պատրաստ չէ որոշում կայացնելու համար և, հետևաբար,

(a) ամբողջովին հետաձգում է տվյալ հարցը,

(b) դիմողներին հրավիրում է, Դատարանի կանոնակարգի 30-րդ կանոնի համաձայն՝ պատշաճորեն ներկայացված փաստաբանի կողմից, առաջիկա երեք ամիսների ընթացքում Քարտուղարություն ներկայացնել իրենց՝ արդարացի բավարարում ստանալու վերաբերյալ հնարավոր պահանջները,

(c) Պալատի նախագահին հրավումք է վերապահում նշանակելու հետագա ընթացակարգը:

Կատարված է անգլերենով և ֆրանսերենով՝ Մարդու իրավունքների պալատում, Ստրասբուրգում, 1986թ. նոյեմբերի 24-ին:

Մարկ-Անդրե Էյսեն
Քարտուղար

Գերարդ Վիարդա
Նախագահ